ԳԵՏԱԿՆԵՐ

Բագրևանդ ունի նաև բազմաթիւ գետակներ, որք մեծաւ մասամբ Ջրաբաշխ լեռներէ ի հարաւ արևելս կը խոնարհին և բուն Վաղարշակերտի դաշտի մէջ նոյն ուղղութեամբ հոսելով ձախ կողմից Շեռեանայ կը խառնուին, քանին ևս ի հարաւ արևմուտս խոնարհելով Դաշլի և Քօր-գետ անուամբ Գարաքիլիսայի մօտերից անցնելով՝ Մուրատ կը թափին աջ կողմից։

Մենք թողլով փոքր ջրերն, 10-ի չափ մեծ ջրերու վերայ ակնարկ ձգեմք, որք ժողովրդոց մէջ գ՝ը-ա կամ ը-ը անունը ունին, որք գարնան անհուն կը դառնան, ամրան մեծ մեծ առուներով դաշտի վերայ կը բաժանուին, գիւղացւոյն բերքը կը քառապատկեն, այնպէս որ շատ գետակներու մէջ կաթիլ մի ջուր չգտնուիր [1]։

1. Ջեռըկան կամ Ջաշ գետ.—Այս գետակը երկու ճիւղ ունի, որք կը բղխին Սուկաւէտի արևմտեան և արևմտեան հիւսիսային (Հաճի կեռուկից) կողերից, որք տակաւ առ տակաւ իրար միանալով նախ յարևմուտս, ապա հարաւ և Ջաշ գիւղի [2] ստորոտն ի հարաւ յարևելս կուղղուի, 3—3 ½ ժամ ընթացքէ մի յետոյ դաշտ կիջնայ, դաշտի առաջին գիւղի, Ջեռըկանի հարաւ արևմտեան եզրն քերելով իւր ընթացք կուղղէ դէպի Շեռեան, ձախ ափին մօտերն թողլով Խոշեան, Մսուրի և Ջուրուկ գիւղերն, իսկ աջին վերայ Դաւոյ, որ Շեռեանայ ձախ ափին վերայ է, ուստի կը խառնուի Շեռեանայ։

---

1. Գարաքիլիսայի երկու կողմէ իջնող Դաշլի և Քօր գետակներն մշտատև են, որք իրև գետ միշտ առատ ջուր ունին։ 2. Միւս երեսի ջուրն Տէլի բաբայի կողմ կը հոսի։